

ՄԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ՀՈՒԴԱՑԱԿԱՆ ԱԿՈՒՆՔԸ.
ՆՈՅԻ ՏԱՊԱՆՈՎ ՍՐԲԱՑՎԱԾ ԼԵՌԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ*

Բանալի բառեր – Նոյան տապան, Արարատ-Մասիս, Կորդուք, հուղայական համայնք, Նախճուան-Նախիջևան, Հովսեփոս Փլավիոս

Արդեն, իբրև հավաստի գիտելիք, պետք է արձանագրել, որ Սուրբ գրքում նշված Արարատի լեռները, երկիրն ու թագավորությունը համապատասխանում են Հայաստանին, և որ Միջագետքի սրբազան ասքերի տապանակիր լեռը (Կորդվագ լեռներ) Ուրարտու-Արմենիա-Հայաստանում է¹:

Հարկ է մեկնաբանել, թե ինչու և ինչպես հայկական լեռնաշխարհից իբրև տապանակիր լեռներ ընտրվեցին Ջուղի լեռը՝ միջագետքյան (շումերա-աքքադա-բաբելոնյան) վիպական ավանդություն, Մասիս-Արարատը՝ եբրայական ավանդություն, իսկ հետագայում, երբ քրիստոնեության և իսլամի շնորհիվ տիրապետող դարձավ միայն Նոյան տապանի առասպելը, Նոյի տապանակիրը դարձավ մի դեպքում Ջուղի լեռը, մյուս դեպքում՝ Մասիս-Արարատը: Իսկ ցայսօր այնուհետև, հաղթող դարձավ Մասիս-Արարատը քրիստոնեական աշխարհում, իսկ Ջուղի լեռը՝ իսլամական աշխարհում:

XIX դ. վերջերից Ջ. Ֆրեզերի շնորհիվ հայտնի դարձավ, որ Սուրբ գրքում և Գիլգամեշի էպոսում վկայված աշխարհակործան ջրհեղեղը համաշխարհային բանահյուսական մոտիվներից է²: Թե այդ մոտիվով միջերկրածովյան ավազանում և Մերձավոր Արևելքում որքան պատումներ ու տարբերակներ են ստեղծվել, անհայտ է, բայց դրանցից պահպանվել և գրավոր շրջանառության մեջ են դրվել վերոնշյալ երկու վիպասքերը. միջագետքյանը՝ Ջիուսուդրա (=երկարատև կյանք)-Ուտնափիշտիմի (=շունչ գտավ) և եբրայականը՝ Նոյի (=հանգստություն, մխիթարություն) մասին: Դատելով հերոսների

* Հոդվածի հիմքում ընկած է 2014 թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտաժողովի զեկուցումը նվիրված նախիջևանցի պատմաբան Ստեփան Մելիք-Բախչյանի ծննդյան 90-ամյակին:

¹ Վերջին հոդվածները մատենագիտական տեղեկատվությամբ, տե՛ս Մարգարյան Դ., Բիբլիական Արարատի լեռները ըստ սեպագիր արձանագրությունների // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 2001, թիվ 2, էջ 268-276, Մուշեղյան Ա., Ո՞ր լեռան վրա է իջել Նոյան տապանը // «ՊԲՀ», 2003, թիվ 1, էջ 3-39:

² Տե՛ս Փրեզեր ԴՋ. ԴՋ., *Фотопатор в ветхом завете*, М., 2003, с. 77-102:

